

Անհրաժեշտ եւ Ռամկավարական Որոշում Մը

Արցախի Ազգային Խորհուրդի Կազմութիւնը

Արցախեան շարժումը սկսելէն ի վեր, 20 Փետրուար 1988, ինքնավար Մարզին մէջ տիրող սուր կացութիւնը հասած է որոշապէս խիստ տագնապալի, եթէ ոչ՝ բախտորոշ աստիճանին: Թէեւ սպասուած արդար եւ քաղաքական լուծումը տեսանելի չէ հորիզոնին վրայ, այսուհանդերձ ամէն օր հարցը կը կրէ զգալի նոր զարգացում մը, որուն երկու ամենէն յատկանշական արտայայտութիւնները կը կազմեն Մարզին պաշարումը ազերիներու կողմէ եւ 16 Օգոստոսին Արցախի մէջ կազմութիւնը Ազգային Խորհուրդին, որ մանրակար կառավարութիւն մըն է, եւ որ որպէս պետական իշխանութեան խորհրդանիշ ընդունած է Ս. Միութեան պետական դրօշակը, վար առնելով ատրպէյճանականը:

Վերջին չորս ամիսներուն Արցախ գործադուլի մէջ կը գտնուի: Հաւանաբար ճշմարտութենէն շատ հեռացած չենք ըլլար, եթէ ըսենք որ անցեալ տարուան Փետրուարէն ի վեր, առաւել կամ նուազ չափով, գործադուլը շարունակաբար կը տիրէ Մարզին մէջ: Մէկը, որուն կեանքէն իրեն ինկած ամբողջ բաժինը եւ իրաւունքը եղած է լաւաշ հաց մը, կրնայ գոհանալ նաեւ ցարդ ստացածին կիսովը, եթէ երբեք յոյսը կտրէ, որ պիտի շարունակուի իրեն զլացուիլ մարդկային արժանավայել գոյութիւն մը՝ իր տոհմային կենցաղով: Վերջին շաբաթներուն, սակայն, ազերիները նպատակաւորաբար գտան հայկական խաղաղ գործադուլները վերածել արիւնալի բախումներու: Ու ասիկա՝ քաղաքականօրէն բացատրուած, զարմանալի չէ. նոյնիսկ սպասելի է:

Ամէն անգամ որ Պաքու զգայ կամ տեսնէ, որ Արցախի հարցը իրեն համար աննպաստ դարձուածք մը կրնայ ստանալ, կը դիմէ թրջական բարբարոս դասական եղանակին, որուն ամենէն պերճախօսը Սովակայիթի հայոց դէմ կազմակերպուած ջարդն էր: Նոյնը պատահեցաւ նոյնմբեր 1988ին Ատրպէյճանի քաղաքներուն մէջ, ուր այս անգամ տիրուր համբաւ չհանցաւ Կիրովապատը, ուր հայերու դէմ կազմակերպուեցաւ, 24ին, «արիւնոտ Հինգշաբթի»: Այդ շրջանին Պաքու մտավախութիւնը ունէր, որ Մարզը վարչականօրէն իրմէ կրնայ անջատուիլ եւ կապուիլ Մոսկուայի:

Իսկ անցեալ ամիս Արցախ կը ժամանէր Գերագոյն Խորհուրդէն բխած Թնճնաժողով մը, որուն տեղեկագիրը կրնայ վճռական դեր մը ունենալ Արցախի ապագայ գոյավիճակին վրայ: Թնճնաժողովի անդամներուն ինչպէս նաեւ Մոսկուայի վրայ ազդելու համար, այս անգամ Պաքու որոշեց համատարած սարսափ ստեղծել Արցախի մէջ, զոր պաշարած կը պահէ, հակառակ Խորհրդային զօրքերուն ներկայութեան եւ հոն տիրող ստիպողական վիճակին: Ազերիները կը յարձակին անհատ հայերու վրայ ինչպէս նաեւ կ'ահաբեկեն հայկական գիւղերու բնակչութիւնը, կը փակեն ճանապարհները, կը խոչտանգեն եւ կը սպաննեն հայերը: Պաքուի ազերիները կ'ամբողջացնեն մթնոլորտը, իրենց կարգին նաեւ սպաննելով հայեր:

Խորհրդային ջոկատներուն եւ ներքին ապահովութեան մասնաւոր ուժերուն ներկայացուցած պատկերը որոշապէս պղտոր է: Բնական է, որ առանց այդ զինուորական ներկայութեան ջարդը եւ մարդկային ողբերգութիւնը անչափելի համեմատութիւն մը պիտի ստանային, սակայն եթէ կարդանք ակնատեսի վկայութիւնները, ինչպէս՝ «Գրական թերթ»ի Արցախի մասնաւոր թղթակիցին մտահոգիչ մէկ թղթակցութիւնը, զոր կը հրատարակենք այս թիւով, պիտի նկատենք, որ կարգ մը տեղեր, իրենց պաշտօնին ամբողջական թերացումին առնթեր որոշ մեղսակցութիւններ կան իրաւապահ որոշ ուժերու եւ ազերի խռովարարներուն եւ ահաբեկիչներուն միջեւ, այլապէս կարելի չէ անպատիժ զինուորական ստուգիչ կէտէ մը ինքնաշարժով հայկական գիւղեր մտնել, գոռալու համար «Հայեր, գիւղը պարպեցէք, այլապէս ձեզ կը կոտորենք», ու ապա, նոյն անպատիժ կերպով պաշտօնապէս գիւղէն ելլել, ու դեռ չենք խօսիր այլ ընդվզեցուցիչ դէպքի մը մասին, երբ Հայաստանէն Ստեփանակերտ շինարարական բեռներով լեցուն ինքնաշարժներուն առջեւ ոչ միայն ճամբան կը փակուի Լաչինի մէջ, այլեւ զինուորական հրամանատարին եւ փոխ-նստիկանապետին իսկ անտարբեր նայուածքներուն տակ «հարած բագուցիներ» ... կը խուզարկեն հայ ինքնաշարժները խափանարարական ծրագիրով մը:

Դժուար է երեւակայել, որ այդքան փոքրաթիւ հողամասի մը վրայ ծաւալած խորհրդային մասնաւոր ջոկատները չեն յաջողիր պաշտպանել ո՛չ Արցախի հայ բնակչութիւնը, ո՛չ ալ ապահովել Հայաստանէն Արցախ երկարող մի քանի մղոն ճամբու մը ազատ անցքը՝ բեռնատար ինքնաշարժներու համար: Այս պատճառով, է որ կարելի է հարց տալ, թէ Մոսկուայի մէջ կարգ մը ղեկավար եւ ազդեցիկ շրջանակները ի՞նչ կը հետապնդեն, Մարզին հայութիւնը պահելով ազերիներու սարսափին ենթակայ: Պարզ է նման երեւոյթի մը քաղաքական մեկնաբանութիւնը. Մոսկուա, հիմնականին մէջ, դեռ կը շարունակէ պահել Մարզը Ատրպէյճանի իշխանութեան տակ պահելու իր հին միտքը, կամ կ'ուզէ չափաւորել արցախցիներուն «ախորժակ»ները:

Այս իրադրութեան մէջ է, որ Արցախի բնակչութեան բոլոր կուսակցական, իրաւական, սահմանադրական եւ արհեստակցական միութիւններու ներկայացուցիչները եւ ղեկավարները 16 Օգոստոսին ժողով գումարեցին յայտարարելու համար Ազգային Խորհուրդին կազմութիւնը, որուն միանալու հրաւեր ուղղած էին Մարզի ազերի ներկայացուցիչներուն, ու սակայն բախած էին անոնց մերժումին: Ազգային Խորհուրդին կազմութիւնը հրամայական պահանջ մըն էր, որուն ձգձգումը դէպի խորխորատ կ'առաջնորդէր Մարզը, անոր

տնտեսական կառոյցը եւ բնակչութեան կեանքը: Խորհուրդին կազմութիւնը ստիպողական էր մանաւանդ նաեւ այն պատճառով, որ կառավարման Յատուկ Թանճնախումբը չարաբարացուց եւ ոչ ալ ի վիճակի եղաւ պատուելու իրեն վստահուած պարտականութիւնը: Յունուար 5ին, երբ Ս. Միութեան Գերագոյն Սովետի նախագահութիւնը որոշում կ'առնէր Արցախի «Ղեկավարման յատուկ ձեւ մը» ստեղծելու ուղղակի ենթակայ Մոսկուայի, ամբողջ հայութիւնը կը ծափողջուէր Մոսկուայի որոշումը, այն յոյսով որ Մոսկուան էր որ այլեւս պիտի ղեկավարէր ինքնավար Մարզը, քանի Յատուկ Կոմիտէն «անմիջականօրէն պիտի ենթարկուի» ինչպէս կ'ըսուէր որոշումին մէջ «Խորհրդային Միութեան պետական իշխանութեան եւ կառավարման բարձրագոյն մարմիններուն», եւ քանի՝ «Մարզի տարածքին՝ դատախազութեան եւ դատարաններու գործունէութիւնը պիտի ընթանայ ներկայ օրէնսդրութեան եւ այն կարգի համաձայն, որ կը սահմանեն Ս. Միութեան գլխաւոր դատախազը, Արդարադատութեան նախարարութիւնը եւ Գերագոյն դատարանը:

Կառավարման Յատուկ Կոմիտէին անդամները, նախագահութեամբ Արքատի Վոլսքի որ կը վայելէր, իբր թէ, ամբողջական եւ անսահման իրաւասութիւններ, հիմնականին մէջ ոչինչ կրցան ընել, եթէ նկատի չառնենք այն պարագան, որ Մարզը հասցուցին այսօրուան վտանգաւոր փուլին, քանի անոնք ոչ մէկ ձեւով կրցան արգելք հանդիսանալ Պաքուի ոտնձգութիւններուն, դաւերուն եւ հիմնական պահանջներուն: Մոսկուայի 400 միլիոն ռուբլի օժանդակութիւնը, որ պիտի ծառայէր Մարզին տնտեսական զարգացումին, ծառայեց միայն Պաքուին, որուն ափին մէջ դրուած էին գումարին մեծ մասը, ինչպէս նաեւ Արցախի վերելքին գործնական կարգադրութիւնները: Այս կողմովը նաեւ Մոսկուա յանցաւոր է, երբ զօհ փրկելու որպէս գլխաւոր միջոց ուզեց գործածել Արցախին դահիճը:

Միւս կողմէն Կառավարման Յատուկ Կոմիտէն դարձաւ իսկական շարիք մը, երբ որպէս բարձր կոմիսար, Մարզը զրկեց իր ժողովրդական, կուսակցական եւ օրէնսդրական մարմիններու ամէն իրաւասութիւններէն: Անոր անկարողութիւնը, Պաքուի դէմ անզօրութիւնը եւ իր քմահաճ կարգ մը կարգադրութիւնները դարձան օրէնք:

Արցախի Ազգային Խորհուրդին ստեղծումով է, որ ժողովուրդը եւ աշխատաւորները կրնան տակաւ վերագտնել իրենց կորսնցուցած ամբողջական վստահութիւնը եւ վերադառնալ աշխատանքի, այն հաստատ յոյսով, որ իրենցմէ բխած հարազատ ղեկավարութիւն մը ճիշդ եւ ուղիղ ճամբով պիտի փնտռէ եւ հետապնդէ Մարզին քաղաքական արդար լուծումը: Ազգային Խորհուրդին պարտականութեան մաս կը կազմէ ոչ միայն Մարզին Տնտեսական եւ աշխատանքային կեանքին բնականոնացումը եւ խաղաղութեան շուտափոյթ ապահովումը (որուն համար կոչ ըրած է զինուորական եւ ապահովութեան պատասխանատուներուն, որ «գործօն կերպով համագործակցին բնակչութեան հետ»), այլեւ «ինքնավար Մարզին Հայաստանի հետ վերամիաւորումը»: Ազգային Խորհուրդը ձեռք կ'երկարէ նաեւ իր դրացի ազերիին որ օրէնքի ճամբով լուծուին տարակարծութիւնները, քանի «երկու ժողովուրդներուն զաւակները վաղը պէտք է ապրին եւ աշխատին այս հողին վրայ»:

Մոսկուայի կողմէ մինչեւ հիմա առնուած որոշումներուն ձախողութեան յառաջացուցած անելը պատճառ դարձաւ, որ այս Յունիսին Գերագոյն Սովետը ստեղծէ կառավարական յատուկ յանձնաժողով մը, արդար տեղեկագիր մը պատրաստելու համար Արցախի ճշգրիտ կացութեան մասին: Տեղեկագիրը դեռ չէ յայտարարուած, սակայն անոր «նախնական անաչառ ամփոփագիրը» զոր այս թիւով կուտանք, ոչ մէկ յստակ եզրակացութեան կը յանգի եւ հիմնական ոչ մէկ թելադրութիւն կ'ընէ: Այսուհանդերձ, պիտի խուսափինք այս մասին արտայայտուելէ, մինչեւ որ հրապարակուի տեղեկագիրին ամբողջական բնագիրը, որ կը յուսանք, ըստ յայտարարուածին, անաչառ պիտի ըլլայ:

Մինչ այդ, մինչեւ վերջնական արդար լուծում, Արցախի հայութիւնը իր քաջարի նախնիներուն նման պիտի գիտնայ տոկալ, համբերել, պայքարիլ եւ անշեղօրէն շարունակել իր իտէալը, որ է վերամիացումը հարենիքին: Ոչ Ազերիներու կողմէ պաշարումը, ոչ ալ այլ կարգի ահաբեկումները պիտի կրնան տկարացնել իր հաւատքը հանդէպ իր արդարագոյն դատին, եւ ընկճել՝ իր անտեղիտալի կամբը:

Այդ անսասան կամքին մէջ արտայայտութիւնն է Ազգային ձակատին ստեղծումը:

BAIKAR ARMENIAN WEEKLY
 ISSN 0741-8396
 An A.D.L. Publication
ՊԱՅՔԱՐ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան
 Ամերիկայի Արեւելեան Երջանակի
 Published weekly except two weeks in July by:
Baikar Association, Inc.
 468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172
 Telephone: (617) 924-4420
 Telex (TLX): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860
 Editor: **KRIKOR KEUSSEYAN**
 Subscription Rate: \$50 per year
 Advertising: \$5.00 per column inch
 Second Class Postage paid at Boston, MA
POSTMASTER: Send address changes to **Baikar Armenian Weekly**,
 P.O.Box 302, Watertown, MA 02172